




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.1

n-86

17 FEB 2010

Հ. Ս. Խ. Հ. ԿՈՆԵՐՉԿԵՆՏՐՈՆ

Վ. Ռ. Ր. Ն. ՈՒՄՆԵՐ
ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

338.1

17-88

ՊԵՏՏՐԱՆ

1931

ՅԵՐԵՎԱՆ

мг.

ՊՐՈՇՈՒՄՆԵՐ

ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՍԻՆ

(Համ. Կ. (բ) Կ.-ի Սնորյերկամի, Հ Կ (բ) Կ. Կենսկամի յեկ
Հաղժողկումասի ու կոլսնսկենսունի վորոշումնոր բա-
բակի մեակուրյան կամպանիայի կազմակերպման մասին)

16 JUL 2013

29981

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1707
ԳԼԱՎԼԻՏ 6548 (Բ)
ՊՍՏՎԵՐ 3180
ՑԻՐԱԺ 3000



665
38

ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿ (Բ)Կ-Ի ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ 1931 Թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի
ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

1

Անդրկովկասի գյուղատնտեսության սո-
ցիալիստական վերակառուցման ասպարիզում
ձեռք բերված հաջողությունները (մինչև
1931 թ. մայիսի 1-ը ԱՍՖԽՀ-ում միջին հաշ-
վով կոլեկտիվացման և յենթարկվել տնտե-
սությունների 34 տոկոսը, իսկ բամբակագոր-
ծական շրջաններում՝ 48 տոկոսը, մեքենատը-
բակտորային կայանները հիմնականում ընդ-
գրկել և բամբակի ցանքերի ամբողջ տարածու-
թյունը. լայնորեն արմատացել և տրակտորա-
յին մշակումը և շարքացանը, վորոշ չափով
կանոնավորվել և ջրային տնտեսությունը և
այլն) ստեղծում են բոլոր անհրաժեշտ պայ-
մանները՝ բամբակի բերքատվությունը բարձ-
րացնելու համար:

Ընթացիկ տարում Ադրբեջանում բամբա-
կի բերքատվությունը, վոր 1930 թ. միջին
հաշվով կազմում էր 4,4 ցենտներ մի հեկտա-
րից, 1931 թվականին պետք է հասնի 8,5 ցենտ-

ների. Հայաստանում 8,0 ցենտներից պետք է հասնի 11,0 ցենտների. Վրաստանում՝ 3,3 ցենտներից՝ 7,7 ցենտների: Այդպիսով այս տարի Ագրբեջանում և Հայաստանում բամբակի բերքատվությունը գերազանցելու յե մինչպատեբազմյան մակարդակը:

Անդրյերկոմն արձանագրում է, վոր մի չարք կուսակցական և կորհրդային կազմակերպություններ դեռ կատարելապես չեն ըմբռնել բմբակի բերքատվության բարձրագույն տնտեսական-քաղաքական բացառիկ նշանակությունը և բայլչեվիկորեն մարտական կազմակերպչական աշխատանք չեն ծավալել՝ մորիլիզացիայի յենթարկելու կոլտնտեսականներին և անհատական չքավոր ու միջակ մասնակրին բերքատվութունը բարձրացնելու համար մղվող պայքարի շուրջը:

Անդրյերկոմը բամբակի հեռակապած բոլոր կազմակերպություններից պահանջում է առավելագույն կազմակերպվածություն ցուցաբերել մշակման կամպանիան կիրառելիս և հասնել աշխատանքի աշխատի վորակի ու տեմպի, վոր ապահովվի բերքավտության բարձրացման խնդիրների լիակատար իրագործումը:

II

1. Անդրյերկոմն առաջարկում է բամբակագործական շրջանների կազմակերպություն-

ներին իրենց ուշադրության առանցքը դարձրենել մշակման կամպանիայում կոլտնտեսականների ու անհատական տնտեսությունների բանվորական ամբողջ ուժը լրիվ ոգտագործելու խնդիրը:

Այդ ամենալուրջ խնդիրը հաջող լուծելու համար, կոլտնտեսություններում պետք է լրբիլ իրականացնել խորհուրդների 6-րդ համագումարի այն վորոշումները, վորոնք պահանջում են հետեվողականորեն կիրառել դործավարձը, սահմանել արտադրանքի ճիշտ նորմաներ, արմատապես բարելավել ու կանոնավորել աշխատանքը, վերացնել յեկամուտների բաշխման հավասարեցուցիչ մեթոդները, խրտիվ պահպանել այն սկզբունքը, վորի համաձայն «ով ավելի շատ և լավ է աշխատում, նա ավելի յե ստանում և ով չի աշխատում, նա վորինչ չի ստանում»: Մասսայական աշխատանք ծավալել լայնորեն արմատացնելու կոլտնտեսություններում և անհատական տնտեսություններում սոցմրցումն ու հարվածայնությունը, վորպես աշխատանքի արտադրականության բարձրացման հզոր միջոց և լայն զարգացնել չքավոր ու միջակ տնտեսություններում բամբակի արգի մշակման հատարական ձևերը (դաշտերի հանրային մշակումը, բրիզադների կազմակերպումը և այլն):

2. Սակայն Անդրյերկոմը դտնում է, վոր հանրապետական և շրջանային կուսակցական

կազմակերպությունները դեռևս թույլ են պայքար ծավալում խորհուրդներին 6-րդ համագումարի վորոշումներն իրականացնելու համար, չափազանց դանդաղ կերպով ամենորոյա կոնկրետ աշխատանք են ծավալում կոլտնտեսություններում գործավարձը, աշխատանքի բրիգադային մեթոդը, նրա հաշվառումը և այլն արմատացնելու համար: Մի շարք դեպքերում թերագնահատվում է այն զինադրությունը, վոր ցույց է տալիս կուլակությունը համագումարի վորոշումների իրագործմանը: Դա յուրջ վտանգ է սպառնում բամբակի բերքաավությունը բարձրացնելու առաջադրանքների կատարմանը:

Մինչև վերջին ժամանակներս վոչ Անդր-կոլտնտեկներոնր, վոչ հանրապետական կոլտնտեկներոններից վորեւե մեկը հաստատուն ցուցումներ չեն ավել կոլտնտեսական սխտեմին կոլտնտեսություններում փողի և հացահատիկի ավանսները բաշխելու կարգի մասին: Դրա շնորհիվ մի շարք բամբակագործական կոլտնտեսություններում ավանսների բաշխումը կատարվել է տնտեսությունների միջև հավասարապես և վոչ թե յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի քանակի ու վորակի համաձայն:

Անդրյերկոմն առաջարկում է հանրապետությունների կենտկոմներին, Անդրկոլտնտեկներոնին և Անդրհարթոյկոմատին՝ անհա-

պաղ վերանայել աշխատանքի կազմակերպմանը, ավանսների բաշխման կարգին, արտադրանքի նորմաներին ու զնահատումներին վերաբերյալ բոլոր ցուցումներն ու դիրեկտիվները ծառայեցնել դրանք կոլտնտեսության բանութն առաջին հերթին բամբակի համար ողտադործելու խնդիրներին, կոլտնտեսության մեջ ստեղծելով այնպիսի պայմաններ, վորոնք խթանեն բամբակի բարձրորակ մշակումը:

3. Առաջարկել կուսակցական բոլոր կազմակերպություններին և կոլտնտեսական սխտեմին՝ ամենաուշը մինչև մայիսի 25-ը վերջացնել գործավարձն արմատացնելու, արտադրանքի նորմաներ և զնահատումներ սահմանելու, բրիգադներ ու աշխատանքի հաշվառում կազմակերպելու գործը:

Նույն ժամկետին ավարտել կոլտնտեսություններում ամառվա աշխատանքների պլանների կազմումը, կատարելապես կարգի բերել ամբողջ ինվենտարը, ընտրել բրիգադիրներ ու պատասխանատու ղեկավարներ՝ աշխատանքի զանազան բնագավառերի համար և պատրաստել ու հրահանգել նրանց:

4. Ուղարկել բամբակագործական կելտնտեսություններն առնվազն 1000 ուսանող, հատկապես բացատրելու խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները, ոգնելու կոլտնտեսություններին գործավարձի անցնելու աշխատանքի պլաններ կազմելու և մշակման կամ-

պանիրան կիրառելու: Ուշադրութեամբ նվիրել մորիլիզացիայի յենթարկված ուսանողներին կոնկրետ հրահանգմանը և նրանց վորակական խիստ ընտրութեամբ:

5. Մոտակա տասնությալի ընթացքում կազմակերպել յուրաքանչյուր շրջանի ուսուցչութեան 5-10 հաժապներ և հրահանգել նրանց կոլտնտեսութեանների աշխատանքի կազմակերպման ու հաշվառման արդարեւում, գործավարձի ու աշխատանքի բրիգադային մեթոդներն անցնելու ձեւերի, սոցմրցման կազմակերպման և ավանաների բաշխման ասպարեւում և այլն:

6. Առաջարկել բամբակագործական շրջանների կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կոլտնտեսական և կոոպերատիվ կազմակերպութեաններին՝ անհապաղ մասսայական լայն աշխատանք ծավալել բամբակագործների (թե կոլտնտեսականների և թե անհատական չքավոր ու միջակ մասսաների) մեջ, նպատակ դնելով նրանց ինքնամրցումը բամբակի մշակման ամառվա ամբողջ շրջանում, գործը կազմակերպելով այնպես, վոր նրանց հոտերն ամառվա արտաւալայրերն ուղակվեն հանրային հովիւներով:

7. Աչքի առաջ ունենալով կանանց աշխատանքի բացառիկ նշանակութեանը մշակման կամպանիայում, մի շարք միջոցներ ձեռք առնել կանանց աշխատանքը լրիւ ոգտագործելու:

առաջին հերթին կոլտնտեսութեաններում և բարեւալելու կանանց աշխատանքի պայմանները՝ կազմակերպելով հանրային սնունդ, հիմնելով մանավանդ պարզ տեսակի մսուրներ, մանկապարտեզներ և այլն: Առաջարկել հանրապետութեանների ժողկոմխորհներին և Անդրբամբակիում ին՝ անհապաղ միջոցներ ձարել այդ նպատակի համար:

8. Առաջարկել հանրապետութեանների հողթողկոմատներին՝ ամենաուշը մինչև հունիսի մեկը ապահովել բամբակագործական շրջանները բուժողնութեամբ և կիրառել մի շարք հակամալարիային ու կանխիչ ձեռնարկումներ (ճահիճների նավթումը, քինինացումը և այլն):

9. Անդրյերկումը պարտավորեցնում և բամբակագործական խորհանտեսութեանների վարիչներին և նրանց Անդրիւկկասյան վարչութեանը՝ մորիլիզացիայի յենթարկել բոլոր ուժերն ու միջոցները որինակելի կերպով կիրառելու խորհանտեսութեաններում մշակման կամպանիան, ոգնութեան կազմակերպելով շրջակա կոլտնտեսութեաններին այդ կամպանիայի կիրառման ասպարեւում:

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը, գործավարձի հաստատուն կիրառումը, խորհանտեսութեանների տեխնիկական բոլոր հնարավորութեանների լրիւ ոգտագործումը և ին-

վենտարի «գլխադուրկ» ոգտագործման վերա-
ցումը, սոցմրցման և հարվածայնության ել
ավելի ծավալումը, իրենց աշխտանքով աչքի
ընկողներին պարզակտրումը — անհրաժեշտ
պայման է խորհանտեսություններում աշխա-
տանքի արտադրողականությունը բարձրաց-
նելու և բամբակի սահմանված բերքատվու-
թյանը հասնելու ու դերազանցելու համար:

III

1. Ամառը բամբակը վոռոգելու համար
սահմանել հետևյալ ժամկետները՝ առաջին
վոռոգումը ունիսի 5-ից մինչև 26-ը, յերկ-
րորդ և յերրորդ վոռոգումը հուլիսի մեկից
մինչև ոգոստոսի 15-ը:

Հանձնարարել Անդրժուղկոմատին և Ան-
դրբամբակիումին՝ 10 որվա մեջ սահմանել և
հրապարակել բամբակի ամառվա վոռոգման
ժամկետները ըստ առանձին շրջանների, յեր-
նելով տվյալ շրջանում ցանքի ավարտման
ժամկետից:

Անդրյերկոմն առաջարկում է կուսկաղմա-
կերպություններին՝ ամենորյա սխտեմատիկ
վերահսկողություն հաստատել վոռոգման
շրջանային պլանների կատարման և ջրառդ-
տագործման ճիշտ մեթոդների կիրառման
վրա, ծավալելով քաղաքական ու կազմակերպ-
չական աշխատանք հետևյալ լողունգով՝ «վոչ

մի լիզը ջուր առանց ուսցիոնալ ոգտագործ-
ման»:

2. Հաստատել բամբակի մշակման հե-
տևյալ հիմնական ժամկետները՝

առաջին քաղհանն ու մշակումը նոսրաց-
մամբ և շարքային մշակամբ՝ մայիսի 20-25-ից
մինչև հունիսի 10-15-ը.

յերկրորդ քաղհանն ու մշակումը, շարքա-
յին մշակամբ՝ հունիսի սկզբից մինչև հուլի-
սի 10-ը.

յերրորդ քաղհանն ու մշակումը պետք է
ավարտվի ամենաուշը մինչև հուլիսի 20-ը,
յերկրորդ վոռոգումից հետո.

չորրորդ և հաջորդ քաղհանները՝ յուրա-
քանչյուր վոռոգումից հետո:

3. Բոլոր շրջաններում կազմակերպել բա-
րակային և չքավորական լայն կոնֆերենցիա-
ներ մշակման կամպանիայի հիմնական հա-
ցերի շուրջը, առանձնապես զարկ տալով կա-
նանց մեջ կատարվող մասսայական աշխա-
տանքին:

Մեքենատրակտորային կայանների ազ-
րոնոմիական շրջաններում կազմակերպել կոլ-
տընտեսական կոնֆերենցիաներ, իսկ մեքենա-
տրակտորային կայաններում՝ մշակման կամ-
պանիայի խորհուրդների հատուկ ժողովներ:

4. Մայիսի 15-ից մինչև հունիսի մեկը
կազմակերպել մասսայական ազրոտեսխիկա-
կան արշավներ դեպի դյուղ, հանձնելով նրանց

կազմակերպման հիմնական աշխատանքը
ՀԼԿՅՍՄ Անդրյերկումի և հանրապետական
ԼԿՅՅՄ Կենտկոմին:

5. Առաջարկել Անդրարհմխորհին, հանրապետական արհմխորհներին, մեքենատրակտորային կայանների բանվորներին արհմիություններին և հողագործական խորհանտեսությունների բաղադրիչների ու բանվորների արհմիություններին՝ ակտիվ մասնակցել մշակման կամպանիայի կիրառմանը, ամրացնել մի շարք պատասխանատու արհմիութենական աշխատողներ բամբակագործական շրջաններին՝ ստորին արհմիութենական կազմակերպություններին ոգնելու համար: Ձեռնարկությունների շեֆ-աշխատանքը տանել տեղերում այդ կամպանիայում ոգնելու գծով:

6. Առաջարկել Վրաստանի Կ(բ)Կ և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմներին՝ անհապաղ բարելավել այդ հանրապետությունների բամբակագործական շրջանների թուրքական կուտեստեսությունների սպասարկումը հրահանգիչներով և կուտեստական շարժման ու բամբակագործության վերաբերյալ մասնագետական գրականությամբ՝ թուրքերեն լեզվով:

7. Հանձնարարել Անդրբամբակին՝ հատուկ ֆոնդ կազմել կուտեստեսություններին ամենաբարձր բերքատվության համար պարպեվատրելու նպատակով:

1. Անդրյերկումի առաջարկում է բամբակագործական շրջանների կուտակցական կազմակերպություններին՝ անհապաղ ամենավճռական պայքարը ծավալել վորեն ձեռք արտահայտվող դեմոքրիլիզացիոն տրամադրությունների դեմ, վորոնք հետևանք են բերքատվության բարձրացման համար մշակման կամպանիայի նշանակության աջ ոպորտունիստական թերագնահատման:

2. Մինչև հուլիսի մեկն իրենց տեղում թողնել այն բոլոր աշխատողներին, վորոնց ուղարկել են կետկոմներն ու Անդրյերկումը՝ ոգնելու տեղական կազմակերպություններին բամբակի կամպանիայի կիրառման ասպարիդում, բեռնելով նրանց ուշադրությունը բամբակի մշակման կազմակերպման վրա:

3. Մշակման կամպանիայի ամբողջ ժամանակաշրջանում պահպանել բամբակի սերմանման անդրկովկասյան հանրապետական և շրջանային հանձնաժողովները, հանձնելով նրանց այն կամպանիայի անմիջական ոպերատիվ ղեկավարությունը:

* * *

Բամբակի դեմ կուլակության մղած պայքարը, նրա ուժեղ ղիմադրությունը բերքատվության բարձրացման համար կուտակցու-

թյան ու խորհրդային իշխանության կիրառած
ձեռնարկումներն՝ պահանջում է, վոր կու-
սակցական և խորհրդային բոլոր կազմակեր-
պությունները, մշակման կամպանիան կիրա-
ռելիս, ուժեղացնեն դասակարգային գեղուն-
թյունը և ել ավելի համախմբեն կոլտնտեսա-
կան և չքավոր ու միջակ մասսաների կուսակ-
ցության ղեկավարության շուրջը՝ վճռական
տրչավ գործելու կուլակության վրա, կոլտըն-
տեսական շարժման հետագա ծավալման և
բամբակի բերքատվության բարձրացման ա-
ռույժադրանքների լրիվ կատարման համար:

Հ.Կ.(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՄԱՅԻՍԻ 21-ի ՎՈՐՈ-
ՇՈՒՄԻՑ

1. Գյուղատնտեսության սոցիալիստա-
կան վերակառուցման հիման վրա (մինչև
մայիսի 20-ը Հայաստանում միջին հաշվով
կոլեկտիվացված է գյուղացիական տնտեսու-
թյունների 25,2 տոկոսը և բամբակացան չըր-
ջաններում՝ 34,9 տոկոսը, կոլտնտեսություն-
ներն ընդգրկել են բամբակի ամբողջ տարա-
ծության կեսը, կազմակերպված են բամբակի
խորտնտեսություններ, մեքենատրակտորա-
յին կայանները հիմնականում ընդգրկել են
բամբակի ամբողջ տարածությունը, լայնորեն
գործադրվել է տրակտորային մշակությունը,
ցանքը կատարված է ամբողջապես շարքացան
և այլն), կոլտնտեսականների և չքավոր ու
միջակ գյուղացիական մասսաների ակտիվու-

թյան և աշխատանքային ենտուղիագմի հզոր
վերելքի հիման վրա, կուլակության, աջ ոպոր-
տունիզմի և «ճախ» շեղումների դեմ մղած ան-
հաշտ պայքարում, Հայաստանի կուսակցու-
թյան կազմակերպություններն առաջին հաջո-
ղություններն են ունեցել այս տարվա բամբա-
կի կամպանիայի ներկա ետապում:

Մինչև մայիսի 9-ը՝ նախնական տրվ-
յալներով՝ Հայաստանում ցանված է 26.205
հեկտար բամբակ: Բամբակի ցանքի պլանն
այսպիսով գերակատարված է: Ցանքը շա-
րունակվում է հետ մնացած չրջաններում (Վա-
մարլու) և մոտիկ որերս կավելացվի պլանի
գերակատարումը:

2, Ձեռք բերելով այդ հաջողությունները
բամբակի համար մղած պայքարում՝ ցանքի
չրջանում, և լարելով բոլոր ուժերը հետ մնա-
ցած չրջաններում և գյուղերում ամենաարագ
կերպով ցանքը վերջացնելու համար, անհրա-
ժեշտ է այժմ և յետ րայլ չեիկորեն ձեռնարկել
բամբակի մշակման կամպանիային՝ քաղհա-
նին, կուլտիվացիային, ջրելուն, ծավալելով
մարտական կազմակերպչական, մասսայական
քաղաքական աշխատանք՝ ամենալայն կերպով
մոբիլիզացիայի յենթարկելու համար կոլտըն-
տեսական և անհատ չքավոր ու միջակ մասսա-
ներին՝ 1930 թ. 8 ցենտներ բերքատվություն
այս տարի մի հեկտարից միջին հաշվով 11
ցենտներ հասցնելու համար:

Անհրաժեշտ է շեշտել, վոր բամբակի

բերքատուությունը շեշտակի կերպով բարձրացնելու խնդիրը—մոտ 300 հազար ցենտներ բամբակ ստանալու խնդիրը— կարող ե հաջողությամբ իրագործվել միմիայն մշակման ընթացքում բայլչեվիկյան կազմակերպվածություն և աշխատանքի բարձր վորակի հայտ բերելու ղեպքում:

3. Բանվորական ուժի հարցը—, վորը մշակման կամպանիայի ամենադժվար հարցն է, հաջող լուծելու նպատակով ՀԿ (բ) Կ կենտրոն անհրաժեշտ է համարում բամբակացան շրջանների կուս. կազմակերպությունների առաջ իր ամբողջ սրությամբ դնել այդ շրջանների ներսում յեղած աշխատանքային հնարավորությունների մաքսիմալ ոգտագործման խնդիրը, հնարավորություններ, վորոնք լիովին բավական են բանվորական ուժով ապահովելու համար բամբակի մշակությունը:

Այդ լիովին ուսալ և իրագործելի խնդիրը լուծելու, այսինքն բամբակի մշակությունը լիովին բանվորական ուժով ապահովելու համար կենտկոմն անհրաժեշտ է համարում կենսագործել հետեվյալ ձեռնարկումները:

ա) Խորհուրդների Միութենական 6-րդ Համագումարի վորոշումների հիման վրա հունիսի 1-ից մոտ ուշ ամարտել դործավարձային աշխատանքի կիրառումը բամբակացան շրջանների բոլոր կոլտնտեսություններում, կոլտնտեսականների լայն քննությանը դնելով առաջավոր կոլտնտեսականների փորձի հիման

վրա կող. տնտ. կենտրոնի և Հողծողկոմատի կողմից վերամշակված մշակման և գնահատության նորմաները: Նորմաների հետագա ճշտման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել առաջադրվող մշակման հանգիստական նորմաները:

բ) Նույն ժամանակում վերջացնել բրդագաղների կազմակերպումը կոլտնտեսություններում, աշխատանքի հաշվառման կազմակերպումը և ամառվա շրջանի բանվորական պլանների կազմումը, լիովին կարգավորելով ամբողջ ինվենտարը և աշխատանքի տարրեր բրդագաղավորների համար առաջադրելով բրդագաղներ և պատասխանատու ղեկավարներ:

գ) Հասնել կոլտնտեսականների աշխատանքի արտադրողականության առավելագույն բարձրացմանը, ճիշտ կազմակերպելով աշխատանքը դործավարձային հիման վրա, հաշվի առնելով այն կոլտնտեսությունների փորձը, վորոնք խոշոր նվաճումներ են ունեցել բամբակի ցանքը կատարելիս, յեկամալ բաշխման հավասարեցուցիչ մեթոդներից կոլտնտեսականների կատարած աշխատանքի քանակի և վորակի համաձայն յեկամուտը բաշխելու սկզբունքին անցնելու հետևանքով:

դ) Լայնորեն ծավալելով կոլտնտեսական փոխադարձ ոգնության սոցիալիստական բուքսիքի, բամբակի մշակության հասարակական ձեվերի պրակտիկան կոլտնտեսություններում և անհատական չքավոր և մի-



ջակ տնտեսություններում՝ լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը և հարստացնել լայնորեն, վորպես արտադրողականության բարձրացման հզոր միջոց:

ե) Մշակման ընթացքում, առաջավոր հարվածային կոլտնտեսությունները պետք է ամեն տեսակի ոգնություն կազմակերպեն հեռմնացողներին, հարկավոր է լայնորեն դործադրել շրջանների և գյուղերի փոխադարձ մասսայական աշխատանքային ոգնությունը:

զ) Նկատի ունենալով, վոր բամբակացան շրջաններից արտաավայրերը քոչելը վորոչ չափով պակասեցնում է բամբակի մշակության համար անհրաժեշտ աշխատանքային ուսուրանքը, բամբակացան շրջանների և մասնավորապես Ղամարլվի և Վեդիի շրջանների կուսակցական, սյրոֆմիութենական, կոլարնտեսական և կոոպերատիվ կազմակերպությունները պետք է մասսայական աշխատանք կատարեն բամբակացանների մեջ, նրանց մըշակման ամբողջ ժամանակաշրջանում բամբակի ցանքին ինքնամբարցման յենթարկելու համար:

ե) Հաշվի առնելով կանանց աշխատանքի մասսայական ոգտադորժման բացառիկ նշանակությունը բամբակի մշակման հաջողության համար, անհրաժեշտ է լավացնել կանանց աշխատանքի պայմանները, կազմակերպելով հասարակական սնունդ, մսուրներ, մանկապարտեզներ և այլն:

Այդ նպատակով առաջարկել Առժողովմատին անմիջապես ծավալել մսուրների կազմակերպումը բամբակացան շրջաններում, այնպես, վոր միջև հունիսի 10-ը լիովին սարքավորված լինեն 50-ից վոչ պակաս մսուրներ: Միաժամանակ առաջարկել Մատակարարման ժողովմատին անմիջապես միջոցներ ձեռք առնել լիովին տպահովելու համար այդ մսուրները բոլոր անհրաժեշտ նյութերով և սննդամթերքով:

Առաջարկել Հայկոտպին 5 որվա ընթացքում կազմել բամբակացան շրջաններում հասարակական սնունդը բարելավելու ձեռնարկումներ կոնկրետ ծրագիր և ներկայացնել Կենտկոմի Ագիտ-Մասսայական բաժնին և հաստատություն:

Հանձնարարել Խուսժողովմատին նույն ժամանակամիջոցում Ագիտ-Մասսայական բաժնին ներկայացնել նույնը՝ բամբակացան շրջաններում մանկապարտեզներ կազմակերպելու մասին:

4. Հիմնականում հաստատել Առժողովմատի ներկայացրած ծրագիրը բամբակացան շրջաններում հակամարտիային և պրոֆիլակտիկ ձեռնարկումների վերաբերյալ, առաջարկելով համապատասխան չահազրդոված տնտեսական կազմակերպություններին ժամանակին հատկացումներ տնել հակամարտիային ֆոնդին:

5. Կենտկոմն առաձնապես չեչտում է մը-

չափման կամպանիան բամբակացան խորհրդատեսություններում որինակելի կերպով իրոք բալլեվիկներն անցկացնելու անհրաժեշտությունը, ճիշտ կազմակերպելով աշխատանքը, լիովին իրագործելով գործավարձայինը, առավելագույն չափով ոգտագործելով տեխնիկական հնարավորությունները, վերացնելով ինվենտարի ոգտագործման դիմադրկությունը, ծավալելով աշխատանքի սոցիալիստական ձեւերը, պարզեւլատրումները և այլն:

6. Առաջարկել բամբակացան շրջանների բոլոր կուս. կոմիտեներին հունիսի 1-ից 5-ը հրավիրել բառարկային-չբավորական լայն կոնֆերենցիաներ, քննության դնելով մշակման կամպանիայի հիմնական հարցերը և հատկապես ծավալելով մատույնական աշխատանքը կանանց շրջանում:

7. Մայիսի 27-ին ըստ մեքենատրակտորային կայանների ագրոնոմիական շրջանների հրավիրել լայն կոլտնտեսական կոնֆերենցիաներ, քննելով բամբակի մշակության կամպանիայի հարցերը:

8. Հանձնարարել ՀԼԿՅՄ կենտկոմին կազմակերպել մատույնական ագրոտեխնիկական արշավներ դեպի գյուղեր, մորելիզացիայի յենթարկելու Յերեվանի գյուղատնտեսական տեխնիկումների և դպրոցների 300-ից վոչ պակաս ուսանողներ, ինչպես նաև շրջանային կենտրոններում կատարելով կոմյերիտական-

ների մատույնական մորելիզացիա, նրանց յերկու շաբաթով գյուղ ուղարկելու համար:

9. Հայաստանի բոլոր շրջանների համար սահմանել բամբակենու ջրման և մշակման հետեւյալ ժամկետները:

Առաջին ջուրը հունիսի 12-ից հուլիսի 2-ը:

Յերկրորդ ջուրը հուլիսի 3-ից հուլիսի 22-ը:

Յերրորդ ջուրը հուլիսի 23-ից սեպտեմբերի 10-ը:

Չորրորդ ջուրը սեպտեմբերի 11-ից ոգոստոսի 26-ը:

Հինգերորդ ջուրը ոգոստոսի 27-ից սեպտեմբերի 10-ը:

Առաջին քաղհանը՝ կուլտիվացիայի և նոսրացման հետ միասին՝ մայիսի 20-ից հունիսի 7-ը:

Յերկրորդ քաղհանը՝ կուլտիվացիայի հետ միասին՝ հունիսի 17-ից հուլիսի 7-ը:

Յերրորդ քաղհանը՝ կուլտիվացիայի հետ միասին՝ հուլիսի 8-ից հուլիսի 26-ը:

Չորրորդ քաղհանը՝ կուլտիվացիայի հետ միասին՝ հուլիսի 27-ից ոգոստոսի 13-ը:

10. Հիմնականում հավանություն տալով Հողթողկոմատի ներկայացրած բամբակի մշակման պլանին, առաջարկել նրան անմիջապես շրջանները հասցնել այդ պլանը: Կուսակցական շրջկոմներին առաջարկել ապահովել այդ պլանների լայն քննությունը կոլտնտեսա-

կան և չքավոր-միջակային մասսաների կողմից՝ մինչև հունիսի 1-ը:

Առաջարկել գարնանացանի լիազորությանը՝ տեղերում պլանների մասսայական քննությունից հետո՝ հունիսի 5-ից վոչ ուշ վերջնականապես ձևել և հաստատել պլանները:

11. Առաջարկել բամբակացան շրջանների մեքենատրակտորային կայաններին մարտականորեն վերակազմակերպել իրենց աշխատանքը, անմիջապես անցնելով բամբակի մշակման խնդիրների լուծմանը:

12. Առաջարկել վնասատուների դեմ պայքարող ընկերությունը բոլոր միջոցները ձեռք առնել բամբակի վնասատուների դեմ հաջողությամբ պայքարելու համար, խնդիր դնելով բամբակի սրսկումը յերկու անգամից վոչ պակաս կատարելը:

13. Հաշվի առնելով բամբակի շրջաններում յեղած քաշող ուժի լարված դրությունը, առաջարկել բամբակացան շրջանների շրջկոմներին մեքենատրակտորային կայաններին և կոլտնտեսական ու կոոպերատիվ կազմակերպություններին՝ առաջնություն չափով ոգտադործել ձիերը, յուրաքանչյուր ձիու համար սահմանելով որակաւ մեկ ու մի քառորդ հեկտարից վոչ պակաս կուլտիվացիա:

Միաժամանակ խնդիր դնել կուլտիվացիայի համար ամեն կերպ ոգտադործելու յեզներին այն շրջաններում և գյուղերում,

վորտեղ ձիերը բավական չեն: Յեզների և ձիերի ոգտադործման առաջնությունը արդյունք ստանալու համար անհրաժեշտ համարել յայնորեն կազմակերպել ձիայեզային կալոններ բամբակի շրջաններում:

Վճռական պայքար մղելով բամբակի ցանքի վերջը մոտենալու կապակցությամբ առաջ յեկող դեմոքրիլիզացիոն տրամադրությունների դեմ, կոլտնտեսական չքավոր և միջակ մասսաներին պայքարի դուրս բերելով բամբակի բարձր բերքառության համար, գլխավորելով նրանց ախարիվությունը և արտադրական խանդավառությունը, ուժեղացնելով հարձակումը կուլտիվության վրա և անոգոքաբար կովելով նրա գործակալության՝ աջ և «ձախ» ոսորոտունիսաների դեմ, բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունները պետք և անմիջապես Համ. Կ. Կ. Անդրյեբկոմի մայիսի 12-ի վորոշման հիման վրա ծավալեն բամբակի մշակման կամպանիան, բայլչեվիկորեն նոր հաղթանակներ տանելով Խորհրդային Միության բամբակի անկախության համար մղվող պայքարում:

ԲԱՄԲԱԿԱՑԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՈԼՈՂ ԿՈԼՏԵՏԱԽՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈԼՏԵՏԱՍԻԹՅՈՒՆԵՐԻՆ ՅԵՎ
ԿՈԼՏԵՏԱԿԱՆՆԵՐԻՆ

Բամբակացան շրջանի կոլտնտեսությունները հաջողությամբ ավարտեցին գարնան

դյուղատնտեսական աշխատանքների առաջին ետապը: Կոլտնտեսական հատվածի բամբակի հողային փաստական տարածութ յունները լիովին ցանվեցին: Վարի ու ցոնքի չըջանում կոլեկտիվ անտեսութ յունների ձեռք բերած հաջողութ յուններից պետք է ընդգծել կոլտնտեսութ յունների ներքին չինարարութ յան ծավալումը, աշխատանքի կազմակերպումը դործավարձայինի հիման վրա, արտադրողականութ յան զգալի աճումը, ցանքի արտադրական-տեխնիկական նախապատրաստական ու կիրառման ցուցանիշների բարձրացումը և այդ բոլորի հիման վրա՝ կոլտնտեսութ յունների աճումը:

Սակայն կոլտնտեսական դյուղացիութ յան անվիճելի սեփականութ յունը դարձած այդ հաջողութ յուններին ուղեկցել է մի ամբողջ շարք թերութ յուններ: Բամբակացան չըջանների կոլտնտեսութ յունները 15 000 հեկտար բամբակի պլանում տվին զգալի ձեռք: Բամբակացան չըջանների (բացառութ յամբ Դուր-դուղուլու) կոլեկտիվացման անբավարար տեմպի հետեվանքով ցանքի պլանն իր ժամանակին չկատարվեց: Մալխի սռաջին և յերկրորդ տասնորյակի տվյալներն ընդգծում են կոլտնտեսութ յունների անբավարար աճումը վերջին չըջանում: Մի շարք տեղերում կոլեկտիվացման վերելքի կազմակերպումը մասնաված է ինքնահոսի, կոլեկտիվացման դեմ

հարուցվող սպորտունիտական արգելակներն անհրաժեշտ հակահարված չեն ստացել: Սորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները դեռ կոլտնտեսականների լայն մասսաների սեփականութ յունը չեն դարձել: Գործավարձին անցնելը չի զուգակցվել անհրաժեշտ բացատրական աշխատանքի՝ կոլտնտեսութ յուններում, վորի հետեվանքով վորոշ տեղերում դատակարգային թշնամու յելույթը դործավարձայինի ու աշխատանքի ձիշտ կազմակերպման դեմ՝ արժանի հակահարվածը չի ստացել:

Մի շարք կոլտնտեսութ յուններում դործավարձի յին անցել ձեվականորեն, չմշակելով արտադրանքի կալուն նորմաներ և քննութ յան չառնելով դրանք արտադրական խորհրդակցութ յուններում ու կոլտնտեսական ընդհանուր ժողովներում: Գոյութ յուն ունեցող արտադրանքի նորմաները, ինչպես ապացուցվեց գաղնանացանի ընթացքում, շատ ցածր են: Գործավարձը վորոշ տեղերում փոխարինվել է որավարձով (Շորլու-Մեհմանդար, Վարմադյար, Նարեհմանլու և այլն):

Բրիգադների կազմակերպման ժամանակ վորոշ կոլխոզներում յելակետ չեն ընդունել արտադրական սկզբունքը, նրանց կազմը յեղել է հոսուն, և կոլտնտեսականի աշխատանքի հաչվառումը բրիգադում դեռ կանոնաչոր հիմքերի վրա չի դրված: Անհատական ողա-

կային դործավարձը տեղերում (վաղապատ չըջան) փոխարինվում է միայն խոշոր, բազմամարդ բրիգադներին դործավարձով, վերաբացասական ազդեցութիւնն է դործում, իջեցնելով կոլտնտեսականի աշխատանքի արտադրողականութիւնը:

Ներկայումս մենք թեւականել ենք բամբակենու մշակման և բերքատուության բարձրացման կարեւորագույն չըջանը: Առաջարկվում է բոլոր կոլտնտեսական կազմակերպութիւններին, զարնան դյուղատնտեսական աշխատանքի այս յերկրորդ կարեւորագույն չըջանում, ամենահամարձակ կերպով ձեռնարկել կոլեկտիվացման նոր, ավելի հզոր աննախընթաց շարժում կազմակերպելու աշխատանքներին՝ գոյութիւն ունեցող կոլտնտեսութիւնների ամրացման հիման վրա: Կոլեկտիվ սեկտորում ընդգրկված մասսաները կազմակերպված կերպով դրոշմ-հանել հանուն բամբակի բարձր բերքատուության, խորհուրդների 6-րդ համագումարի փորձումները կենսագործման, կոլտնտեսական աշխատանքի արտադրողականութիւնը մաքսիմալ չափով բարձրացնելու, դործավարձի լրիվ կիրառման և բամբակենու նկատմամբ դիրեկտիվ մարմինների կողմից նախատեսված բոլոր ձեռնարկումները ժամանակին կենսագործելու:

ՄԻՋԻՆ ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿ ՀԵՆ-
ՏԱՐԻՑ 11,2 ՅԵՆՏԵՆԵՐԻՑ ՊԱԿԱՍ ՉՊԵՏԲ Ե.
ԼԻՆԻ

ա) Բամբակենու քաղհանը կատարել 4 անգամ՝ հետեւյալ ժամկետներով—

Առաջին քաղհանը, նոսրացումն ու կուլտիվացիան վերջացնել փոչ ուշ քան հունիսի 7-ը: 2-րդ քաղհանը, նոսրացումն ու կուլտիվացիան սկսել հունիսի 17-ին, վերջացնել հուլիսի 7-ին, 3-րդ քաղհանն ավարտել փոչ ուշ, քան հուլիսի 8—26-ը և 4-րդ քաղհանը կատարել հուլիսի 27-ից—ոգոստոսի 13-ը, իսկ հաջորդ քաղհանները կատարել ըստ կարիքի, փոփոխելուց հետո:

բ) Բամբակը ջրելու համար սահմանել հետեւյալ ժամկետները. առաջին ջուր—սկսել հունիսի 12-ից, վերջացնել հուլիսի 2-ին: 2-րդ ջուր—սկսել հուլիսի 3-ից վերջացնել հուլիսի 22-ին: 3-րդ ջուր—սկսել հուլիսի 23-ից, վերջացնել ոգոստոսի 10-ին: 4-րդ ջուր—սկսել ոգոստոսի 11-ից, վերջացնել ոգոստոսի 26-ին: 5-րդ ջուր—սկսել ոգոստոսի 27-ից, վերջացնել սեպտեմբերի 10-ին: Հետագա ջրերը տալ ըստ բամբակենու պահանջի, իսկ ուժեղ ու խոնավ հոգեւում խուսափել վերջին ջրերից:

գ) խոտիվ հետեւել ու ժամանակին կազմակերպել պայքարը բամբակենու վնասատուների դեմ, ժամանակին ստանալով համապա-

տասխան մարմիններից պահանջվող քանակու-
թյամբ բուժանյութեր:

դ) Անմիջապես ապահովել պահանջվող
քանակությամբ քաղհանի ու բամբակենու
բուժման և ջրելու համար պետք յեղած մանր
գյուղատնտեսական գործիքներն ու այլ նյու-
թերը:

յե) Ուժեղ բացատրական քաղլուս աշխա-
տանք տանելով դաշտերում հանգստի ժամե-
րին, մասսայականացնել Անդրյերկոմի վորո-
շումը և ՀԿ (բ) Կ Կենտկոմի վորոշումը բամ-
բակենու մշակման մասին, լայն կոլտնտեսա-
րակայնություն ստեղծելով՝ պայքարի հանել
բոլոր կոլտնտեսականները հանուն բամբակի
լավագույն մշակության, խնամքի ու զբա հետ
կապված բերքատվության ամենաբարձր ցու-
ցանիչների:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱ- ԳԱՎԱՌՈՒՄ

ա) Բամբակենու մշակման, խնամքի ու
բերքահավաքի բոլոր աշխատանքները կազմա-
կերպել բացառապես գործավարձի հիմունք-
ներով՝ գնահատված աշխուրեքով, գործա-
վարձը կիրառելով բոլոր կոլտնտեսություն-
ներում:

բ) Նկատի ունենալով, վոր մինչայժ-
մյան արտադրական նորմաները ցածր են յե-
ղել և չեն համապատասխանում գործավարձի
ու աշխատանքի սոցիալիստական ձեռքերին,

վերանայել գոյություն ունեցող արտադրանքի
նորմաները, չափանիշ ընդունելով հարվածա-
յինի արտադրական նորման: Արտադրական
նորմաներն ընդունելիս՝ անպայման դրանք
պետք է քննության յեթարկել արտխորհրդակ-
յություններում և լայնորեն մասսայականա-
նել կոլտնտեսականների շրջանում: Յուրա-
քանչյուր բրիգադը, ողակը, անգամ անհատ
կոլտնտեսականը, կցելով վորոշ հողամասի՝
պատասխանատու դարձնել ֆազիանի ու բամ-
բակենու մշակմանը՝ ամբողջ աշխատանքի ըն-
թացում:

գ) Բրիգադները կազմակերպելիս հիմք
ընդունել անպայման միայն արտադրական
սկզբունքը:

դ) Բրիգադին դարձնելով կոլտնտեսական
աշխատանքի կազմակերպման կենտրոնական
դեմք, խիստ պատասխանատու դարձնել նրան
բրիգադի կատարած աշխատանքի քանակի և
վորակի համար. ամեն կերպ աջակցելով ու
վերապատրաստելով բրիգադիւրներին, նրանց
վրա դնել սկզբնական աշխատանքի հաշվառ-
ման գործը:

յե) Հետեւել, վորպեսզի բրիգադիւրները
նշանակվեն վարչությունների կողմից՝ նրանց
կազմից և լավագույն հարվածայիններից:

զ) Ոգտադործելով մեքենատրակտորային
կայանների և շրջանի ամբողջ աշխ. ուժերը,
միմեկ հունիսի 5-ը բոլոր կոլտնտեսություն-

ներում կազմել փաղիանի, բամբակենու մշակման կամպանիայի բանվորական սրտցուցային ծրագրեր, վորի հիման վրա մշակել շրջանի համար բանվորական ուժի, քաշող ուժի բալանը:

ե) Լայն չափով կիրառել հին կոլտնտեսություններից փորձված կոլտնտեսականների գործուղումը նոր, դեռ չամրապնդված կոլտնտեսությունները, աշխատանքի կազմակերպման գործը կանոնավորելու համար, ինչպես և թույլ, նորակազմ կոլտնտեսություններից գործուղումներ կատարել ամբողջած կոլտնտեսությունները՝ փորձ ձեռք բերելու համար: Գործուղումների թիվը սահմանել Ղուրդուղուլու շրջանի համար 100 կոլտնտեսական, Վաղպատին՝ 80, Ղամարլվին՝ 100 և Վեդուն՝ 40:

ը) Պլանով նախատեսված ժամկետներին բամբակենու մշակման աշխատանքները վերջացնելու համար ձեռք ստանել բոլոր միջոցներն ու կազմակերպված կերպով լայնորեն կիրառել համբալի բուխիքը և փոխադարձ ոգնությունը թե կոլտնտեսություններում և թե կոլտնտեսությունների ու անհատ կոլտնտեսությունների մեջ:

ի) Ստափել խոշոր և բաղմամարդ բրիգադների կազմակերպումը:

լ) Վորպես կանոն բրիգադի արտադրական խնդիրը (նարյադը) տալ ամբողջ աշխատանքի համար (առաջին քաղհանին առանձին,

2-րդ քաղհանին առանձին և այլն)՝ բրիգադի արտադրական խնդիրը և նորմաներն անպայման քննության առնելով բրիգադի արտադրական խորհրդակցությունում և ընդհանուր ժողովում, տալով ժամկետների ու արտադրանքի նորմաների նկատմամբ բրիգադի հանդիպական պլանը:

մ) Բանվորական որվա տեվողությունը վորեւ նշանով կամ ժամերով չպետք է սահմանել:

ն) Իսպառ վերացնել մեռյալ և կենդանի ինվենտարի «դիմադուրի» ոգտագործումը, կցելով նրանց առանձին բրիգադներին, իսկ բրիգադների ներսում՝ առանձին կոլտնտեսականի:

խ) Փորձի փոխանակման նպատակով, հաճախակի հրավիրել շրջաններում կամ յենթաշրջաններում հարվածայինների, կանանց ու յերիտասարդության հատուկ հավաքներ, ուր լսել տեղերի զեկուցումն աշխատանքի կազմակերպման, հարվածայնության, սոցմրցման ու գործավարձի կիրառման խնդիրների մասին:

վ) Առաջարկել ՄՏԿ-ներին՝ բոլոր ազրուուժերը կցել ըստ կոլտնտեսությունների, ու այդպիսով նրանց պատասխանատու դարձնել տվյալ կոլտնտեսություն աշխատանքի կազմակերպման բոլոր խնդիրների համար:

զ) Անողոր պայքար մղելով տեղերում աշխատանքի սոցիալիստական ձեվերի ոպոր-

տունխատական թերաշնահատման դեմ, լայն չափով կիրառել ու գլխավորել սոցմրցումն ու հարվածայնությունը, իսպառ վերացնել պլուրակտիկայից սոցմրցման որինակելի պայմանագրեր տալը, այլ ընդհակառակը, գլխավորել ու կազմակերպել կոլտնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքները, վորոնք պետք է մշակեն ու լայն քննության առարկա դարձնեն սոցմրցման պայմանագրերի խնդիրներն ու հարվածայնության աշխատանքները:

տ) Բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել պարզեցվածության ֆոնդեր աշխորելով և աչքի ընկնող հարվածայնությունն պարզեցվածություն անմիջապես քաղհանի ու բամբակի մշակման աշխատանքների ընթացքում:

վ) Գործավարձը բրիգադներում կիրառել ըստ ողակների ու առանձին կոլտնտեսականների՝ ապահովելով նրանց աշխատանքի հաշվառման գործը:

3) ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա) Աշխատանքի հաշվառումը համարելով գործավարձի լրիվ կիրառման հիմնական նախապայմանը, այդ բնաշավառում նկատվող խոշոր թերությունները վերացնելու համար կազմակերպել հաշվային աշխատակիցների 15-որյա վերապատրաստման դասընթացներ,

ապահովելով յուրաքանչյուր կոլտնտեսությունն առնվազն մեկ հաշվետարով:

բ) Աշխատանքի նախնական գրանցումն ու հաշվառումը կատարել վորպես կանոն ամեն օր, բրիգադի միջոցով, անհրաժեշտ դեպքերում ուղղակի չափումներ կատարելով:

գ) Յուրաքանչյուր բրիգադի արտադրական խնդիր տալու ժամանակ կազմել գլխավոր նարյադ, վորի մեջ չեղտել հանձնարարվող աշխատանքի քանակը և այդ աշխատանքի համար հասանելիք աշխորերի գումարը:

դ) Ինչպես նարյադի, նույնպես հաշվառման համար գործածության մեջ դնել կոլտնտեսարոնի կողմից ուղարկված վերջին ձևվերը:

յե) Աշխատանքի վորակի ստուգումն պետք է կատարի ինքը-բրիգադերը բրիգադի ներսում, իսկ բրիգադերն ամբողջ բրիգադին աշխատանքը հանձնում է վարչության անդամին, դաշտավարին կամ այդ նպատակի համար լիազորված ընկերոջ:

զ) Անմիջապես բոլոր կոլտնտեսություններում աշխատունակ բոլոր կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին ապահովել աշխատանքային գրքույկներով, վորոնց մեջ առնվազը 5 օրը մեկ անգամ պետք է գրանցվի յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի դիմաց նրան հասանելիք աշխորերի ընդհանուր քանակը:

4) ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Խստիվ արգելել ու իսպառ վերացնել նույնաման արտադրողականության ու աշխատանքի համար կնոջ և տղամարդու աշխատանքների մեջ յեղած գնահատումների տարբերությունը:

բ) Հարկ յեղած դեպքում կազմակերպել կանանց հատուկ արտադրական խորհրդակցություններ, և կցված ընկերներին միջոցով ղեկավարել նրանց աշխատանքները:

գ) Կանանց մասնակից դարձնել անպայմանորեն նաև այն աշխատանքներին, ուր նրանք ըստ սովորության անցյալում չէին աշխատում (կուլտիվացիա, ջուր, բամբակենու բուժում և այլն):

դ) Բացվելիք դասընթացներում ապահովել կին աշխատող մասնակցությունը, մինչև հունիսի 5-ը կարճատև դասընթացներով անցկացնել 960-ից վոչ պակաս կուլտնտեսուհիներ, վորոնց ծանոթացնել բամբակենու մշակման ու նրա խնամքի հետ:

զ) Շրջաններում ու յենթաշրջաններում ամիսը մեկ անգամ հրավիրել հատկապես կին հարվածայինների հավաք և քննություններ ղեկավարելու լավագույն խնամքի ու մշակման խնդիրները:

է) Կուլտնտեսուհիներին լայն չափով կուլտնտեսական աշխատանքներում ներգրավելու

համար, մոբիլիզացիայի յենթարկելով կուլտնտեսությունների ներքին միջոցները՝ կազմակերպել բոլոր բամբակացան կուլտնտեսություններում մանկամասերին, մանկահրապարակներին ու մանկապարտեզներին լայն ցանց:

5) ԱՎԱՆՍԱԿԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Ավանտների բաշխման ժամանակ նույնպես չեղումները, այն է՝ ըստ աշխատավոր ձեռքերի կամ քսո շնչի բաժանումը՝ Խումարել անքույլատրելի: Այդ խնդրում անչեղորեն ղեկավարվել յուրաքանչյուր կուլտնտեսականի, կուլտնտեսուհու ներգրած աշխատանքի քանակով ու վորակով, այն է՝ աշխտերով:

բ) Այն կուլտնտեսականները, վորոնք կուլտնտեսական աշխատանքին անմիջականորեն չեն մասնակցում, և աշխատում են այլ հիմնարկներում, ավանտներից վոչ մի դեպքում մասնահանում չպետք է կատարել:

6) ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Դաշտային սնունդը համարելով աշխատանքի արտադրողականության բարձրացման մի կարեւոր գործոն, բոլոր բամբակացան կուլտնտեսություններում կազմակերպել դաշտային սնունդ, նախապես համաձայնություն գալով Սպառկողպերացիայի հետ. նույն նպատակի համար մոբիլիզացիայի յեն-

Թարկել նաև կոլտնտեսությունների ներքին
ուսուրաները:

բ) Քաղլուս դատարարական աշխա-
տանքը տեղափոխելով բամբակի դաշտերը, ոգ-
տագործել բրիգադների հանգստի ժամերը՝
հատուկ կցված ընկերների միջոցով՝ կազմա-
կերպելով բարձրագույն ընթերցանություն ու
զբույցներ:

գ) Ոգտագործել շրջանում յեղած ու-
ղիտ-ցանցը և շրջիկ կիներները, մասսայակա-
նացնելով բամբակենու մշակման ու խնամքի
խնդիրները բոլոր կոլտնտեսություններում:

դ) Խրճիթ-ընթերցարաններն ու գյուղա-
կան ուսուցչությունը վերակառուցելով իրենց
աշխատանքը, ամբողջապես պետք է լծվեն
բամբակի քաղհանի, մշակման կամպանիայի
ու կոլտնտեսական աշխատանքների ճիշտ կազ-
մակերպման գործին:

Ուժեղացնելով հարձակումը դասակարգա-
յին քշմամբ ու նրա գործակալությամբ՝ աչ և
«ճախ» ոպորտունիզմի դեմ, բամբակացան
կոլտնտեսականների ամբողջ մասսան պիտի
ապահովի մինիմում 11,2 ցենտներ բերքը մի
հեկտարից միջին հաշվով և անհատ աշխատա-
վոր տնտեսությունների նոր հոսանք ստեղծի

դեպի կոլտնտեսություն, լուգունց ունենալով
բամբակացան շրջանների համապարած կոլեկ-
տիվացումը 1932 թվին և այդ հիման վրա կու-
լակությամբ լիկվիդացիան, վորպես դասա-
կարգ:

ՍՀՄՀ Հոգողիում՝

Հայաստանի կոլտնտեսությունի
նախագահ՝ ՀԱՅԿ ՍԻԼԱՆՅԱՆ

ՀԱՄ Կ(Բ)Կ-Ի ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿՈՒՍԱԿ-
ՑԱԿԱՆ—ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱ-
ՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

ԲԱՄԲԱԿԱՑԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՄՏՆՈՒՄ ԵՆ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈՒՆԿՏԻՎԱՑՄԱՆ ՓՈՒԼԸ

1. Սոցիալիստական ինդուստրիայի աճ-
ման, խորհրդային ժողովրդների ու մեքենա-
տրակտորային կայանների ծավալման արագ
տեմպերի և կոլտնտեսական արտադրության
հաջողությունների հիման վրա, անհողողի և
անչեղ կերպով կենսագործելով կուսակցու-
թյան հիմնական գիծը, դասակարգային կա-
տաղի պայքար մղելով կուլակության դեմ և
անհաշտ կռիվ մղելով ավյալ ետապի գլխավոր
վտանգ աջ ուղիղունիցի և «ձախ» ուղիղուն-
նիստական խոտորումների դեմ, Անդրկովկա-
սի կուսակցական կազմակերպությունները
բամբակագործության շրջաններում ձեռք բե-
րին կոլեկտիվացման աշխարհի տեմպ և մա-
կարդակ, վորոնք ապահովեցին ԿԿ-ի և ԿՎՀ-ի
դեկտեմբերյան պլենումի առաջադրանքների
հաջող կատարումը (մինչև մայիսի 20-ը ԱՍ-
ՖԽՀ-ի բամբակագործական շրջաններում կո-
լեկտիվների մեջ միացել և լուրջ չքավոր և

միջակ տնտեսությունների 50 տոկոսը) : Բամ-
բակագործության զարգացման ասպարիզում
այս տարի ԱՍՖԽՀ-ի ձեռք բերած հաջողու-
թյունները հնարավորություն են տալիս 1932
թվականի համար ընդունել բամբակագործու-
թյան զարգացման ավելի բարձր տեմպ խորհ-
տնտեսությունների ու մեքենա-տրակտորային
կայանների հետագա ծավալման և կոլտնտեսա-
կան շարժման վերելքի հիման վրա : Գարնա-
նացանի հաջող կերպով և բերքահավաքի
կամպանիայի նախապատրաստումը՝ աշխա-
տանքի ճիշտ կազմակերպման և յեկամությունների
բաշխման, բերքադնեում ուժերի դասավոր-
ման հիման վրա, ամենատեղի գնեքն և հան-
դիսանում կոլեկտիվացման հետագա աճման
համար մղվող պայքարում և դրանով իսկ
ստեղծվում են բոլոր անհրաժեշտ պայմաննե-
րը, Անդրկովկասի հիմնական բամբակագոր-
ծական շրջաններում համապատասխան կոլեկտի-
վացման անցմելու և դրա հիման վրա կուլա-
կուքյան, վորպես դասակարգի, վերացման
գլխավոր լոգունգն իրագործելու համար :

2. Անդրկովկասի արձանագրում և, վոր
Անդրկովկասի կոլտնտեսական շարժման ծա-
վալման ասպարիզում մեր ունեցած հաջողու-
թյունները ձեռք են բերվել անչեղ կերպով
կոլտնտեսական շինարարության մեջ լենինյան
սկզբունքները և հետևողականորեն իրակա-
նացնելով կուսակցության 16-րդ համագումա-
րի վորոշումները, արեվելյան հանրապետու-

Թյուններում մասնաշաղկապ կողոնտեսական շարժում նախապատրաստելու մասին: Անդր-
յերկիումը իր մի շարք վորոշումներում, մաս-
նավորապես կոլտնտեսական շարժմանը վերա-
բերյալ փետրվարի վորջման մեջ, մատնանը-
շել է, վոր միմիայն լայն մասնաշաղկապ-բացա-
տրական ու քաղաքական տշխատանք կատարե-
լով կոլտնտեսական շինարարության կոնկրետ
նվաճումների շարջը, միմիայն վճռարար միմ-
շն վերջն առանց մնացորդի հաղթահարելով
ինքնահոսի տրամադրությունները և միաժա-
մանակ վճռական պայքար մղելով «ձախ» խո-
տորումների ունեյրդիմների դեմ, հնարավոր է
սկսված կողոնտեսական վերելքը վերածել ան-
դրկովկասյան գյուղի տանյակ և հարցու-
հաղարավոր չքավոր ու միջակ մատնաների ի-
րապես հզոր շարժման՝ առաջիկա գարնանա-
ցանի կամպանիայի սլանը կատարելու ու գե-
րակատարելու համար, Անդրկովկասի գյու-
ղատնտեսությունը արմատապես վերակառու-
ցելու համար:

3. Կոլտնտեսական շարժման ծավալման
ասպարիզում մենք հաջողություններ ենք
ձեռք բերել վճռարար պայքար մղելով, ներկա
եռապում գլխավոր վտանգ հանդիսացող աջ
ոպորտունիզմի դեմ: Այդ ոպորտունիզմի ար-
տահայտության ձեմերը (Բորչալիի և Ստե-
փանավանի շրջանների վորձերը, վորով նր-
րանք աշխատում էյին կանոնեցնել խորհուրն-

տեսությունների աճումը, յեւնելով նրանից,
թե կոլեկտիվացման առաջադրանքներն արդեն
կատարված են, Բարդայի և այլ շրջաններում
արդեն կազմակերպված կոլտնտեսություննե-
րի լուծումը), ալնքախ կերպով հաստատեցին
Անդրյերկիումի փետրվարի 12-ի այն ցուցումը,
վոր մի շարք կուսակցական կազմակերպու-
թյուններ մտել են «ձախ» խեղաթյուրումներն
աջ ոպորտունիստական զրակախկայով ուղղե-
լու ճանապարհը: Կուսակցության հիմնական
դժի աջ ոպորտունիստական կոպիտ խեղա-
թյուրումներն առանձին կուսակցական, կոմ-
յերիական, խորհրդային, կոլտնտեսական-
կոոպերատիվ կազմակերպությունների գործ-
նական աշխատանքում արտահայտվեցին նրա-
նով, վոր այդ կազմակերպությունները չէյին
հասկացել, թե կուլակության սահմանափակ-
ման ներկայումս Անդրկովկասում կիրառվող
լոգունդն ոժանդակ դեր է կատարում, նրանք
կոճկում էյին համատարած կոլեկտիվացման
հիման վրա կուլակության, վորպես դասա-
կարգի վերացման գլխավոր լոգունդը, լու-
թյան էյին մատնում և անտեսում էյին այն նոր
լոգունդը, վորի համաձայն, թե գյուղում ըս-
տեղծվել է սոցիետարիատի գիկտատուրայի
իրապես հաստատուն և գլխավոր հենարանը:
Հանձինս կոլտնտեսական գյուղացիության,
թերապահատում էյին չքավորների ու բաա-
րակության մեջ կատարվելիք աշխատանքի
բոլոր ձեմերը, հրաժարվում էյին պայքար մը-

դել արտելի, վորպես կոլտնտեսական շինարարության հիմնական ձեւի համար, անտեսում եյին խորհուրդների Ծ-րդ համագումարի և ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի այն վորոշումները, վորոնք պահանջում են արմատացնել գործավարձը և յեկամուսների բաշխումը յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի քանակի ու վորակի համաձայն, վորձում եյին աղավաղել խորհուրդների համագումարի այն դիրեկտիվի իմաստը, վորը պահանջում է ճիշտ կադմակերպել կոլտնտեսություններում աշխատանքը, սահմանելով արտադրության նվազագույն նորմաներ: Մի քանի տեղական կուսակցական, խորհրդային, կոլտնտեսական կոոպերատիվ կազմակերպություններ նկատի չեն առել, վոր կուլակը ջախջախվելով կուլեկտիվացման հաջող ծավալման դեմ իր ունեցած բացահայտ յելույթներում, այժմ ել դեռևս չհրաժարվելով բացահայտ կովից, անցել է Անդրկովկասի գյուղատնտեսության ոռոգիլիստական վերափոխման և բամբակադործության զարգացման դեմ մղվող պայքարի նոր ձեւերին ու մեթոդներին (Թատիանցում և կոլտնտեսությունները, նպատակ տնկատնով կադմալուծել կոլտնտեսական արտադրությունը ներսից, հանդես և դալիս գործավարձի դեմ, պահանջում է փոխարինել վերջինս որավարձով, պաշտպանում է յեկամուսների հավաստեցուցիչ բաշխումն ըստ շնչի, պայքարում և

գտնաձային կոլտնտեսություններ կազմակերպելու համար, վորնք հաճախ հանդիսանում են միևնույն գյուղում չբավորական ու միջակային առանձին կոլտնտեսություններ կազմակերպելու փորձ, պայքարում են հողոգտագործական ընկերություններն արտելի վերածելու դեմ, կոլտնտեսությունների անբաժան և համայնացված ֆոնդերն ավելացնելու դեմ) և չեն ուժեղացրել իրենց պայքարը կուլակության դեմ:

4. Միևնույն ժամանակ կուսակցական, խորհրդային և կոլտնտեսական-կոոպերատիվ տպարատների առանձին սղակների, նախ և առաջ Անդրկովկասի կենտրոնի և հանրապետական կոլտնտեկենտրոնների ու հողօտկոմատների գործնական աշխատանքում տեղի չեն ունեցել կուսակցության գծի կոպիտ «ձախ» խեղաթյուրումներ, կոլտնտեսական շինարարության մեջ, այն ե՝ փորձել եյին անհատական չբավոր ու միջակ գյուղացիների մեջ տական ծավալվելիք մասնաշաղկապ և անդուլ բացատրական աշխատանքը փոխարինել ձեւական բյուրոկրատիկ մեթոդներով և կոլտնտեսական չարժան սոսկ վարչական ղեկավարմամբ (կազմվել են ստուգիչ թվեր, վորով վորոշվել է, թե քանի տնտեսություն պետք է կոլեկտիվացվի չրջանում և գյուղում, պլանավորվել են հայտարարվելիք ունեվոր կուլակային տնտեսությունները և այլն): Չնայած, վոր քաղա

քական այդ կոպիտ սխալների մասին ազդարարել եր «Պրավդան», ազդային կոմկուսների կենտկոմները և Անդրկոլտնակենտրոնը մի շարք միջոցներ եյին ձեռք ստել կատարված սխալներն ուղղելու համար, Անդրկոլկասի մամուլը («Ջարյա Վաստոկան», Ադրբեջանի Կ (բ) Կ-ի կենտկոմի որդան «Կոմունիստը», «Բակինսկի Ռարոչինն», «Ոորհրդային Հայաստանը») աչքաթող արին այդ փաստերը և ժամանակին չբացատրեցին կուսակցական մասնաներին այդ խեղաթյուրումների «ձախ» քյալադյոդական բնույթը, մասնավորապես Դիլիջանի շրջանի որինակով, վերի մասին հատուկ վորոշում եր կայացրել Անդրյերկոմը:

5. Անդրյերկոմն ընդգծում ե, վոր կուսակցական, խորհրդային, կոլտնտեսական, կոոպերատիվ կազմակերպությունները միմիայն բայլչեվիկորեն խոստովանելով և անհապաղ ուղղելով կոլտնտեսական շինարարության մեջ կատարված կոպիտ սխալները, ել ավելի ուժեղացնելով իրենց ամենորյա դործնական պայքարը կուսակցության հիմնական գծի համար, գլխավոր փասեղ աջ ուղորդունիղմի բոլոր տեսակների հանդեպ ցուցաբերվող հաշտվողանության դեմ, կարող են ել ավելի ամրացնել և ծավալել կոլտնտեսական շինարարությունը և Անդրկոլկասի հիմնական բամբակագործական շրջաններում անցնել համատարած կոլեկտիվացման: Առանց վնասկան

և համառ պայքար մղելու յերկու մակառում, հնարավոր չե բամբակագործական շրջաններում կենսագործել կուսակցության գլխավոր լոգունգը, համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության, վորպես դասակարգի, վերացման մասին և խորհուրդների 6-րդ համագումարի առաջադրած կիմնական խընդիր՝ կոլտնտեսության կողմ, քե՞նրա դեմ լինելու մասին, վորը պարտավորեցնում ե կոլտնտեսական շարժման մակառում աշխատողներին բոլոր կազմակերպություններին և խորհրդային իշխանության որդաններին, անդուլ, համառ, բացատրական աշխտումե կատարել անհատ տնտեսությունների մեջ, ճրգտելով համոզել նրանց, վնտե դնել կոլեկտիվացման ուղին:

ԿՈՒՍ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բամբակագործական շրջանների կուսակցական մասնայական աշխատանքում հիմնական թերությունները հետեվյալներն են՝

ա) Մի շարք շրջանային կազմակերպություններ քիչ են ուշադրություն դարձնում ցանքի մշակման կամպանիայի վորակական ցուցանիշների համար մղվող պայքարի հարցերին, վորով կոլտնտեսականները և անհատական չքավոր ու միջակ մասնաները դեռևս բավականաչափ մորելիղացիայի չեն յենթարկ-

վել, վճռականորեն պայքարելու բամբակագործության հիմնական խնդրի լուծման այժմ ե՛ր բամբակի քերֆասովուքյանն ավելացնելու համար: Մատնանշելով, վոր չնայած բամբակագործական շրջաններին ցույց տրված լուրջ ոգնության և բամբակագործական շրջանները յերկրային ու հանրապետական կենտրոններին աշխատողներ ուղարկվելուն, մասնաժողովական աշխատանքը վորոշ չափով ուժեղացել է բամբակագործական շրջանների գյուղերում, այնուամենայնիվ Անդրյերկումը գրտնում է, վոր այդ աշխատանքը դեռ չի բարձրացվել այն խնդիրների մակարդակին, վորոնք կանգնած են Անդրկովկասի բամբակագործական շրջանների առաջ:

բ) Բամբակագործական շրջանների կուռապարատները և գյուղըջիջները չափազանց թույլ են և սակավամարդ (բամբակագործական շրջաններում բջիջների ցանցն ավելի նոսր է, քան Անդրկովկասի այլ շրջաններում): Բըջիջների վերակազմումն ըստ արտադրական սկզբունքի դեռևս հեռու յե իրագործված լինելուց, գյուղըջիջները գործնականորեն դեռ թույլ են մասնակցում կոլանտեսությունների ներքին կյանքին:

գ) Գյուղխորհուրդների զգալի մասը չի բարձրացրել իր դերը, բամբակի ու կոլանտեսական շինարարության համար մղվող պայքարի բոլոր կոնկրետ խնդիրների լուծման առաջարկով:

դ) Կոլանտեսություններն ու մեքենատրակտորային կայանները հաղթանակ ձեռք բերելով ցանքի պլանի կատարման ճակատամարտում, այնուամենայնիվ բամբակագործական շրջաններում մասնաժողովական աշխատանք ծավալելու և դյուղում ագրո-տեխնիկական գիտելիքներ տարածելու բնագավառում, դեռևս չեն կատարում այն մարտական խնդիրը, վորոնք դրված են նրանց՝ վորպես սոցիալիստական գյուղանտեսության առաջատար ուժի տեսք:

յե) Բամբակագործական շրջաններում չափազանց քիչ է շրջանային թերթերի թիվը (ընդամենը 7 թերթ): Հրատարակվող թերթերը կուսակցական մասնաժողովական աշխատանքի ընդհանուր սխտեմում դեռևս չեն գրավել այն տեղը, վորը պետք է գրավի շրջանային մամուլը, վորպես կոլեկտիվ կազմակերպիչ և կուսակցության հիմնական գիծն իրականացնող:

զ) Շրջանային կոլանտեսությունների ըզգալի մասը մասնաժողովական լայն աշխատանք չի ծավալել կոլանտեսականների մեջ և միանգամայն անտեսում է անհատական չքավոր և միջակ գյուղացիների մեջ կատարվելիք աշխատանքը:

7. Ուստի Անդրյերկումն ընդգծում է, վոր մասնաժողովական աշխատանքի վերակազմումը անհրաժեշտ պայման է կատարելու համար այս

տարվա բամբակի ծրագրի բոլոր ցուցանիշները, ժամանակին նախապատրաստելու և կատարելու համար բամբակագործության 1932 թվականի ծրագիրը, վարի համաձայն մասնավորապես 1932 թվականի ընթացքում, Անդրկովկասում պետք է կոլեկտիվացման յեմթարկվի բամբակագործական շրջանների բոլոր անհատական չփավոր ու միջակ տնտեսությունների 80-85 տոկոսը: Գյուղի բոլոր մասնայական կազմակերպությունների աշխատանքի ծանրության կենտրոնը պետք է փոխադրվի ստորին փառադրական ողակը (հողամաս, բրիգադ և այլն): Հատուկ ուշադրություն պետք է նվիրել կոլտնտեսությունների մասնավորապես կանանց արտադրական խորհրդակցությունների աշխատանքին: Մասայական աշխատանքի այդ կարեւորագույն բնագավառները պետք է առանձնապես կուսակցական սիստեմատիկ դեկավագությունը:

8 Բամբակագործական շրջանների կուսակազմակերպություններն իրենց մասնայական աշխատանքի ընթացքում պետք է՝

ա) Միջոցներ ձեռք առնեն, վոր յուրաքանչյուր կոմունիստ, կոմյերիտական, բոլոր կոլտնտեսականներն ու բաւորակները, չփավորներն ու միջակները յուրացնեն կուսակցության գլխավոր լոգունգը համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը, վորպես դասակարգ վերացնելու մասին:

բ) Բացատրեն մասսաներին խորհուրդներին 6-րդ համագումարի այն վորոշումները, վորոնք արտահայտում են դասակարգային ուժերի նոր խմբավորումը գյուղում: Կազմակերպելով անհատական չքավոր ու միջակ մասսաներին կոլեկտիվացման հետագա աճման համար մղվող պայքարի շուրջը, կուսակցական կազմակերպություններն այդ աշխատանքը պետք է կատարեն յեմթարկվ խորհուրդների 6-րդ համագումարի այն վորոշումից, վորտեղ ասված է՝ «դեռևս կոլտնտեսություն չմտած են մի անհատական չքավորի ու միջակի տուժ այժմ ծառացած և այն հիմնական հարցը, թե նա կոլտնտեսություն կղմնակից է, թե՞ դեմ», բացատրելով մասնայական աշխատանքի ընթացքում և իրագործելով ամենուրյա աշխատանքում կուսակցություն լոգունգը գյուղում բանվոր դասակարգի և խորհրդային իշխանություն զլխավոր ամուր հենարանի մասին, վոր ստեղծվել է հանձնու կոլտնտեսական կազմակերպության, կուսակցական կազմակերպությունները միաժամանակ պետք է ամենավճռական կերպով աշխուժացնեն աշխատանքի բոլոր ձեւերը բաւորակների, չքավորների մեջ: Բոլոր գյուղխորհուրդների, կոոպերացիայի բոլոր որդանների, բոլոր հոգողագործման ընկերությունների և չամբացած արտելների չքավորական խմբակները պետք է արագորեն և կազմակերպված ձեւով ներդրավեն ամբողջ չքավորությունը կոլտնտեսություններում,

բարձրացնեն բատրակների ու չքավորների դերըն աշխարհի կոնկրետ խնդիրների գործնական լուծման մեջ, ինչպիսիք են աշխատանքի ճիշտ կազմակերպումը, յեկամուտների ճիշտ բաշխումը, ուժերի դասավորումը բրիգադներում և նոր տեխնիկայի յուրացումը:

Անդրյերկոմը չեչաում է, վոր անթույլատրելի յե վորեե չափով անտեսել անհատական չքավոր և միջակ անտեսությունների դերը 1931 թվականի բերքահավաքի կամպանիայում և 1932 թվականի բամբակագործության ծրագրի նախապատրաստման ու կատարման մեջ: Ուստի առաջարկվում է բոլոր կուսակցական կազմակերպություններին, լայն ծավալելով մասսայական աշխատանքը և ագրոտեխնիկական ոգնությունը, է՛լ ավելի համախմբել անհատականներին ու կոլտնտեսականներին, ավելի լայն ծավալելու համար կոլեկտիվացումը միասին պայքար մղելու համար բամբակի ծրագիրը հարվածաշնորեն իրագործելու նպատակով:

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՐՁ ԿԱՏԱՐԵԼ ՄԱՍՍԱ- ՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ

Վերոհիշյալ բոլոր ձեռնարկումների կենսագործումն ապահովելու նպատակով, Անդրյերկոմն առաջարկում է՝

1. Բոլոր ազգային կոմկուսներին կենտկոմներին և մարզկոմներին՝ գործնական ոգնու-

թյուն կազմակերպել բամբակագործական շրջանների համար՝ դյուլի կուսակցական, խորհրդային, կոմյեքիտական և կոլտնտեսական կազմակերպությունների մասսայական աշխատանքի ձեվերն ու մեթոդները վերակազմելու սուպարիզում:

2. Բոլոր կուսակցական կազմակերպություններին, ամենավճռական բեկում առաջացնել շրջգործկոմների և դյուլխորհուրդներին, վորպես պրոլետարիատի գիկտատուրայի որդանների, մասսայական աշխատանքի դրովածքի մեջ, որդանների, վորոնց դերն ու նըշանակությունն ավելի յե ուժեղանում համատարած կոլեկտիվացման անցնելու շնորհիվ: Անդրյերկոմը հանձնարարում է ազգային կոմկուսների կենտկոմներին և Անդրկենտգործկոմի Փրակցիային, մշակել գործնական ձեռնարկումներ բամբակագործական շրջանների խորհրդային ապարատների աշխատանքն ուժեղացնելու համար, նախ և առաջ ամրացնելով շրջանային խորհրդային ապարատը վորակյալ դեկավար աշխատավորներով, փոխադրելով շրջանային աշխատողների մի մասի խոշորագույն դյուլխորհուրդները՝ դեկավար աշխատանքի համար:

3. Ազգային կոմկուսների կենտկոմներին և մարզկոմներին՝ ստուգել, թե ինչ չափով են կատարել շրջկոմները ՀամԿ(բ)ԿԻ Անդրյերկոմի փետրվարի 13-ի վորոշումը, ուղարկելով բոլոր խոշոր բամբակագործական շրջան-

ների գյուղըջիջները աշխատողներ՝ մինչև
բերքահավաքի վերջն աշխատանքի վերակազ-
մման ասպարիզում գյուղըջիջներին անմի-
ջական ոգնություն ցույց տալու համար:

4. Կենտկոմներին, մարզկոմներին և շրջ-
կոմներին՝ ձեռնարկումներ մշակել գյուղական
կոմունիստների գաղափարական- քաղաքական
մակարդակը բարձրացնելու համար, առավե-
լագույն չափով ծավալելով կուսակցական լու-
սավորության բոլոր ձևվերը, վճարաբ հազ-
թահարելով խորհրդային կազմակերպու-
թյունների գործունեյությունն իրենց աշխա-
տանքով փոխարինելու առանձին տենդենցնե-
րը, ամրացնելով շրջգործկոմներն ու գյուղ-
խորհուրդները:

5. Առաջարկել Անդրյերկոմի կուլտ պրոպ
և ագիտմաս բաժիններին, ազգային կոմկուս-
ների կենտկոմների հետ միասին, 10 որվա ըն-
թացքում կազմել ոսերատիվ սյւաններ բամբա-
կագործական շրջաններում ազգիոկետերի,
չարժական կինոների և խրճիթ-ընթերցարան-
ների ցանցն ընդարձակելու, մասսայական ա-
գրոտեխնիկական ու հասարակական-քաղաքա-
կան գրականություն հրատարակելու և բամ-
բակագործական շրջաններին մատակարարելու
համար:

6. Նկատի առնելով այն հսկայական նշա-
նակությունը, վոր ունի ազգաբնակության
կուլտուրական մակարդակի բարձրացումը, և
ագրոտեխնիկական տնդրագիտության վերա-

ցումը բամբակագործական շրջաններում, ա-
ռաջարկել ազգային կոմկուսների կենտկոմնե-
րին և շրջկոմներին, ծավալել բամբակագոր-
ծական շրջաններում ագրոտեխնիկական առ-
չավ, ընդգրկելով ագրոխմբակներում և դա-
սընթացներում հնարավոր չափով շատ կու-
տնտեսականներ և անհատական չքավոր ու մի-
ջակ գյուղացիներ: Առաջարկել ազգային կոմ-
կուսների կենտկոմներին և մարզկոմներին մի-
ջոցներ ձեռք առնել հասցնելու ագրոտեխնի-
կական գիտելիքները գյուղական կոմունիստ-
ների մասսաներին: Առաջարկել ազգային կոմ-
կուսների կենտկոմներին և հանրապետություն
ների լուստողկոմատներին՝ մտցնելով բամբա-
կագործության տեխնիկայի հարցերը կուս-
լուսավորության ցանցի ծրագրի մեջ, այդ նը-
պատակով մասնավորապես ոգտագործելով
բամբակագործական շրջանների գյուղական
կուս. կազմակերպությունների ախտիվի հա-
մար կազմակերպելիք տասնորյա դասընթաց-
քներն ու կոնֆերենցիաները, ապահովել համ-
(ը)կ-ի Կենտկոմի 1929 թ. հուլիսի 18-ի այն
դիրեկտիվի կատարումը, վորը պահանջում է
բամբակագործական շրջանների առաջին և
յերկրորդ աստիճանի դպրոցների ծրագրի մեջ
մտցնել գյուղատնտեսական ու տեխնիկական
տարրական գրագիտության պարտադիր դա-
ստամոդումը և բամբակի մշակման տմեհա-
կատարյալ տեխնիկայի հիմունքները:

7. Առաջարկել Անդրյերկոմի Կուլտ-պրոպ

բաժնին՝ միջոցներ ձեռք առնել, վոր 1932 թվականին լիկկայաններն ընդգրկեն բամբակագործական շրջանների բոլոր անգրագետներին:

8. Առաջարկել աղգային կոմիտեների կենտկոմներին և Անդրբամբակկոմին, միջոցներ ձեռք առնել, վոր խորհրդատեսություններն ու բամբակագործ գործարաններն ակտիվ մասնակցեն մասսաների կազմակերպմանը՝ բամբակի ծրագրի լրիվ կատարման և կոլտնտեսական շինարարության հետագու ծավալման ու սմբաշման համար մղվող պայքարի շուրջը:

9. Առաջարկել տեղական կուսակցական և արհմիութենական կազմակերպություններին, մեքենա-տրակտորային կայանների շուրջը ծավալել մասսայական դաստիարակչական աշխատանք, վորպես հիմք ընդունելով աշխատանքային կարգապահության բարձրացումը, դիմագրկության փաստական վերացումը, խրնամքով վերաբերմունքը դեպի մեքենաներն ու վառելանյութը: Մեքենա-տրակտորային կայանների արտադրական պլանները պետք է լայն չափով քնության առնվեն կոլտնտեսականների ու չքավորական խմբակների ակտիվ մասնակցությամբ:

10. Առաջարկել Անդրկովկասի կոլտնտեսներին, հանրապետությունների կոլտնտեսներին հետ միասին, Անդրկովկասի բամբակագործական շրջանների բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել գործավարձի սխեմի արմատաշման ստուգումը:

11. Առաջարկել բամբակագործական շրջանների կուսակցական կազմակերպություններին, անդուլ և համաս կերպով բացատրական լայն աշխատանք կատարել հողագործման ընկերությունների անդամների մեջ, համոզելով նրանց, անցնելու արտելի կանոնադրության:

12. Վճռական պայքար մղել գաճաճային կոլտնտեսությունների կազմակերպման դեմ, ամբամ լուծելով գաճաճային այն կոլտնտեսությունները, վորոնք փաստորեն կեղծ կուլեկտիվ են, միաժամանակ կովելով կոլտնտեսական շինարարության մեջ նկատվող հակոյամոլության դեմ:

13. Ապահովել կոլտնտեսությունների սխեմիատիկ և վճռական գումար, չքավորների ակտիվ մասնակցությամբ, մաքրելով նախ և առաջ ղեկավար որդանները (վարչությունները բրիգադները և այլն) կուլակային և հակախորհրդային տարրերից:

14. Նկատի ունենալով, վոր մի շարք շրջաններում, ինչպես ցույց է տվել գարնանացանի կամպանիայի պրակտիկան, շրջանային հողբաժինների և շրջանային կոլտնտմիությունների ապարատները թափանցել են խորթ տարրեր, պարտավորեցնել աղգային կոմիտեներ, կենտկոմներին յերկու ամսվա մեջ ստունների կենտկոմներին յերկու ամսվա մեջ ստուգել բամբակագործական շրջանների հողբաժինների ու ջրային տնտեսությունների աշխատողների ամբողջ կազմը, և ամբաջնել այդ ու

պարատները կուսակցական կաշուն ընկերներով ու առաջավոր տիտիվ կոլտնտեսականներին առաջ քաշված աշխատողներով:

14. Առաջարկել Անդրաբնակարան, արհմիութենական հանրապետական կենտրոնների միջոցով, մի ամսվա մեջ վերանայել լրամբողջործական չըջանների արհմիություններում թյուրյանների զեկավար կապը և ուժեղացնել գյուղի մասնաշաղկան արհմիութենական աշխատանքը, նախ և առաջ բամբակագործական խորհանդեսներում ու մեքենա-տրակտորային կայաններում:

16. Առաջարկել աշխատանքի կոմկուսներին կենտրոններին և Անդրկուրտիստկենտրոնին, ապահովել կոլտնտեսական կազմերի պատրաստման ու վերապատրաստման ծրագրի իրական կատարումը:

17. Առաջարկել Անդրբամբակեղծին, Անդրհրդ գյուղատնտեսին և հանրապետական հոգեբուժականներին, անհատաշատ վերակազմել գյուղական-հատաշատական և փորձնական հիմնարկների աշխատանքը աշխատի հիմունքներով, վոր այդ հիմնարկները լայնորեն մասնաշաղկանացնեն բամբակագործություն, ջրատնտեսություն և գյուղատնտեսական մեքենաների ոգտագործման բնույթավառում իրենց ձեռք բերած նվաճումները, պատվաստեն իրենց աշխատանքի արդյունքները կոլտնտեսականներին և ահատական չքաղորդ ու միջակ տնտեսություններին:

18. Նկատի ունենալով, վոր մի բամբակագիտական ԲՈՒՀ-ը և 5 բամբակագիտական տեխնիկումը չեն կարող լրիվ բավարարել կազմերի հսկայական պահանջն Անդրբովկասում, առաջարկել հանրապետությունների լուստոդկոմատներին:

ա) Լրիվ և ժամանակին տարահովել բամբակագիտական ուսումնական հաստատություններն ուսանողների համապատասխան կոնտինգենտով:

բ) Բոլոր գյուղատնտեսական ԲՈՒՀ-երում կազմակերպել բամբակագիտություն ամբիոններ:

19. Առաջարկել ՀամԿ(Բ)Կ-ի Անդրյերկոմի Կուրտպրոպ բաժնին, միջոցներ ձեռք առնել ընդարձակելու բամբակագործ. չըջաններում թերթերի ցանցը, նպատակ դնելով, վոր թերթեր հրատարակվեն բոլոր հիմնական չըջաններում և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելով բարելավելու արդեն հրատարակվող չըջանային թերթերի աշխատանքը, ավելացնելու նըրանց տիրաժը, ստեղծելու թերթերի շուրջը գյուղթղթակիցների լայն ակտիվ և բարելավելու մամուլի տարածման ընդհանուր գրվածքը բամբակագործական չըջաններում:

20. Առաջարկել ԱՍՖՈՀ-ի Փոստ-հեռագրի Ժողկոմատին մինչև բամբակի մթերման սկիզբն ավարտել բամբակագործական չըջանների ռադիոֆիկացիան ու տելեֆոնիզացիան, հասուկ միջոցներ ձեռք առնելով կապ հաստա-

տելու գյուղխորհուրդների ու շրջանների, մե-
քենատրակտորային կայանների, խորհրդակե-
սությունների և բամբակի գործարանների մի-
ջից:

ՀԱՏՈՒԿ ՎՈՐՈՇՈՒՄ

1. Հանձնարարել Աղբբեջանի Կ(բ)ԿԿԿ-ին՝
ստուգել ղեկավարության վիճակը Տերտերի
շրջանում, վորտեղ միևնույն գյուղում կաղ-
մակերպվել ե 4 կոլտնտեսություն՝ կուսացա-
կան, կոմյեբիտական, չքավորական և միջա-
կային կոլտնտեսություններ:

2. Առաջարկել Վրացականի Կ(բ)ԿԿԿ-ին՝
ամրացնել կուս. ղեկավարությունը Բորչալվի
շրջանում, վորտեղ ամենակոպիտ աջ-ուպոր-
տունիստական սխալներ են կատարվել կոլտն-
տեսական շինարարության առպարիզում:

3. Հանձնարարել Անդրյերկոմի Կազմհրա-
հանգչական բաժնին՝ ստուգել կուսակցական
աշխատանքի վիճակը Հայաստանի բամբակա-
գործական շրջաններում:

ՆՅԱԳՆԱԿԱՅՍՆՆ

Նրանց գնահատումն առևտսանային ունեով 1931 թ. բաժանելի էրախանի-բերեհովախի կամպանիայի առևտսաններհ.

[illegible][illegible][illegible]

ԾԱՆ. — Աշխատանքի միավորի գնահատումը կատարված է մատիվաթղթիկական հատուկ բյուրո, սակայն կողմնորոշվում քննելիս, պարզեցնելու նպատակով կարելի չէ թվելը կրճատանքի յոնհիմով աշխատանքի տեսակի նպատակները:

տեղական պայմանները:

*) Յեղիկոթ յերրորդ և չորրորդ քաղաքների աշխատանքները գնտեստուովը խորհրդակցության ընդգնատքով թվերից բաժնաբաշխման 20, 40 և 50 0-ով գումար չորհրդակցութիւն և կրթականարժեքի 1931 թ. հանձնարար:

3-ի ժողովուրդի համաձայն:

024





29981